# Ինչպես մի նոր կյանք սկսել հավատքով

**Հավատքի Դասեր**
**Մաս 3**

*«Տերը հաստատ է պահում ցած ընկնողներին և կանգնեցնում է բոլոր կռացածներին:»*
Սաղմոս 145:14

<u>Մարկոս 10:46-52</u>

## 1. Մի հետաձգիր

*«Երբ Հիսուս ... մեծ բազմության հետ Երիքովից դուրս էր գալիս, Տիմեի որդին՝ կույր Բարտիմեոսը, ճանապարհին նստած, մուրում էր: Երբ լսեց, որ Հիսուս Նազովրեցին է անցնում, <u>սկսեց աղաղակել</u> ու ասել. «Որդի՛ Դավթի, Հիսո՛ւս, ողորմի՛ր ինձ:»* Մարկոս 10:46-47

*«Հիսուսը նրան ասաց. «Ոչ ոք, ով ձեռքը մաճի վրա է դնում ու հետ նայում, հարմար չէ Աստծու արքայության համար:»* Ղուկաս 9:62

## 2. Վախը հեռացրուր քեզանից

*«Շատերը <u>նրան սաստում էին</u>, որ լուռ մնար, բայց նա է՛լ ավելի էր աղաղակում. «Որդի՛ Դավթի, ողորմի՛ր ինձ:»* Մարկոս 10:48

*«Վախը մարդուն <u>որոգայթի մեջ կգցի</u>, բայց Տիրոջն ապավինողը ապաստան կունենա:»* Առակաց 29:25

## 3. Դավանիր հավատքդ

*«Հիսուսը նրան հարցրեց. «<u>Ի՞նչ ես ուզում, որ քեզ համար անեմ</u>»: Կույրը պատասխանեց նրան. «Ռաբբո՛ւնի, ուզում եմ տեսնել:»* Մարկոս 10:51

*«Պետք է ասեիք. "Եթե Տերը կամենա, ու ապրենք, այս կամ այն բանը կանենք:"»* Հակոբոս 4:15

*«Ձեզանից ովքեր Քրիստոսով մկրտվեցին, Քրիստոսով զգեստավորվեցին:»* Գաղատացիս 3:27

## 4. Ընդունիր Աստծո շնորհքը

*«Հիսուսը նրան ասաց. "Գնա՛, <u>քո հավատքը</u> քեզ փրկեց»: Եվ նրա տեսողությունն իսկույն վերականգնվեց..."»* Մարկոս 10:52ա

*«Եվ նրա լիությունից մենք բոլորս շնորհի վրա շնորհք ստացանք.»* Հովհաննես 1:16

*«Դրա համար հավատից է ժառանգ լինելը, որպեսզի դա շնորհով լինի, որպեսզի խոստումը հաստատուն լինի:»* Հռովմայեցիս 4:16ա

«Ամեն բան կարող եմ ինձ զորացնող Քրիստոսով»: Փիլիպպեցիս 4:13

## 5. Վերցրու հաջորդ քայլը

*«...և նրա տեսողությունն իսկույն վերականգնվեց, ու հետևեց Հիսուսին:»* Մարկոս 10:52բ

<u>*«Ի՞նչ է օգուտը, եղբայրնե՛ր իմ, եթե մեկն ասի, թե հավատ ունի, բայց արված գործեր չունենա. մի՞թե հավատը կարող է նրան փրկել:»* Հակոբոս 2</u>:14

*«Եվ դուք նրա կողմից եք Հիսուս Քրիստոսի մեջ, որ Աստծուց մեզ համար դարձավ իմաստություն, արդարություն, սրբություն և փրկություն:»* Ա Կորնթացիս 1:30

Հաջորդ Քարոզի Թեման:
**Հարատևել Հավատքի Մեջ**
Հովիվ Սարո Խաչիկեան